Հաստատում եմ

Տնօրեն Գ. Մելքոնյան

«01» սեպտեմբերի 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի

Ստ. Զորյանի անվան № 22 հիմնական դպրոց I դասարան

Դասղեկ՝ Գևորգյան Լիանա Վիկտորի

« 2023- 2024 » ուսումնական տարի

1.ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ /դասարանի ընդհանուր բնութագիրը/

Առաջին դասարանում սովորում է 21 աշակերտ, որոնցից 13-ը՝ աղջիկ, 8-ը՝ տղա: Ունեն բավարար ընդունակություններ: Մեծ սիրով և ոգևորությամբ են դպրոց: Հաճախում են ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Իմ նպատակն է՝ աշխատել դասարանի առաջադիմությունը բարձր պահելու ուղղությամբ: Ծնողները անընդհատ հետաքրքրվում են իրենց երեխաների առաջընթացով:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է սահմանել սովորողների հաճախումների,առաջադիմության և վարքի վերահսկողություն, համագործակցել ծնողների հետ: Դասարանում ստեղծել ամուր կոլեկտիվ,աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն: Հրավիրել ծնողական ժողովներ,որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: :Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ ,այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակությանը, մանկական առողջ կոլեկտիվի ձևավորմանը:Սովորողների մեջ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, համագործակցություն, փոխօգնություն, հանդուրժողականություն, սեր և հարգանք):

3 ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտներին տալ հոգևոր դաստիարակություն: Կազմակերպել փոքրիկ էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոն: Սովորողների մոտ սերմանել հավատք եկեղեցու նկատմամբ: Կարևորել հոգևորը՝ որպես առաջին քրիստոնյա ազգ:

3.2 ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆիլմերի, ցուցատախտակների միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկն ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 ՌԱԶՄԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպել զրույցներ հայրենասիրական թեմաներով: Խոսել նաև մերօրյա հերոսների մասին: Աշակերտների շրջանում աշխատանք տանել ազգային խորհրդանիշերը (դրոշը, զինանշանը, հիմնը) հարգելու ուղղությամբ: Դաստիարակել հայրենիքին պիտանի մարդ:

3.4 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձևավորել կոկիկ խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի նկատմամբ :Զարգացնել կամային հատկանիշներ՝ նպատակասլացություն, ինքնուրույնություն, ինքնարտահայտվելու ցանկություն, հանդուրժողականություն: Կազմակերպել ֆիզիկական վարժություններ՝ մարմինը կոփելու նպատակով:

3.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մեջ սեր և եռանդ սերմանել աշխատանքի նկատմամբ: Պահպանել մաքրություն: Մասնակցել դպրոցական շաբաթօրյակներին: Արժեքավորել և գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

3.6 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեխաներին բացատրել մեզ շրջապատող բնության կարևորությունը մարդու կյանքում, որն ուղղված կլինի նրանց բնության պահպանմանը: Մաքուր պահեն շրջակա միջավայրը: Խնամել շրջակայքի ծառերը և մասնակցել ծառատունկին:

4.ԴՊՐՈՑ –ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Խիստ կարևոր է դպրոց-ընտանիք-երեխա կապը, որը կօգնի երեխայի լիահիժեք զարգացմանը: Հրավիրել

ծնողական ժողովներ և ծնողներին մասնակից դարձնել կազմակերպվող միջոցառումներին, էքսկուրսիաներին և այցելություններին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնականշաբաթներ	Ուսումնադաստիարակչականաշխատանքներիբովանդակությունը	Կատարմանժամկետը	Կատարող
I	Դասարանի ծնողխորհրդի ստեղծում	4.09-8.09.23թ.	
II	Ծանոթություն դպրոցին	11.09-15.09.23թ.	
III	Հայաստան: Հայաստանի խորհրդանիշերը	18.09-22.09.23թ.	
IV	Ճանաչենք և հիշենք	25.09-29.09.23թ.	
V	Տոնդ շնորհավոր, ուսուցի՛չ:	02.10-06.10.23թ.	
VI	Աշնան գույները	09.10-13.10.23թ.	
VII	Ընկերասիրություն	30.10-03.11.23թ.	
VIII	Աշխատասիրություն	06.11-10.11.23թ.	
IX	Նվիրվածություն և հոգատարություն	13.11-17.11.23թ.	
X	Սեր և հարգանք	20.11-24.11.23թ.	
XI	Համերաշխություն և հանդուրժողականություն	27.11-01.12.23թ.	
XII	Բնական աղետներ	04.12-08.12.23թ.	
XIII	Մեր ազգային պետական տոները	11.12-15.12.23թ.	
XIV	Ամանորյա հրաշքը	18.12-22.12.23թ.	

XV	Հայոց բանակ	22.01-26.01.24թ.	
XVI	Իմ հայրենիքը	29.01-02.02.24թ.	
XVII	Բարին արա	05.02-09.02.24թ.	
XVIII	Գիրքնվիրելուտոն:Թումանյանականշաբաթ	12.02-16.02.24թ.	
XIX	Մայրենի լեզու, մայրենի բարբառ	19.02-23.02.24թ.	
XX	Երկնից երեք խնձոր ընկավ	26.02-01.03.24թ.	
XXI	Մայրության և գեղեցկության տոն	04.03-08.03.24թ.	
XXII	Կարգ ու կանոն	11.03-15.03.24թ.	
XXIII	Խոսքի ուժը	01.04-05.04.24թ.	
XXIV	Ճշմարտախոսություն	08.04-12.04.24թ.	
XXV	Մեծաշխարհիհիրաշալիքները	15.04-19.04.24թ.	
XXVI	Հիշում եմ և պահանջում	22.04-26.04.24թ..	
XXVII	Դպրոցի բարիքները	29.04-03.05.24թ.	
XXVIII	Մայիսյան տոներ	06.05-10.05.24թ.	
XXIX	Ընտանիք	13.05-17.05.24թ.	
XXX	Տարեվերջյան ամփոփում	20.05-24.05.24թ.	